

ԿՈՆՎԵՆՏԻԱ
ԽՈՇՈՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՎԹԱՐՆԵՐԻ ԿԱՆԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Նախաբան

Աշխատանքի միջազգային կազմակերպության գլխավոր խորհրդաժողովը, որն Աշխատանքի միջազգային գրասենյակի ղեկավար մարմնի կողմից իր՝ 80-րդ նստաշրջանը գումարել էր ժնելում, 1993 թվականի հունիսի 2-ին, նկատի առնելով աշխատանքի ոլորտը կարգավորող համապատասխան միջազգային կոնվենցիաները եւ հանձնարարականները, մասնավորապես, Աշխատանքի անվտանգության եւ հիգիենայի մասին 1981 թվականի կոնվենցիան եւ հանձնարարականը, Զիմիական նյութերի մասին 1990 թվականի կոնվենցիան եւ հանձնարարականը եւ շեշտելով համապարփակ եւ հետեւողական մոտեցում ցուցաբերելու անհրաժեշտությունը, նկատի առնելով նաեւ 1991 թվականին հրապարակված՝ խոշոր արդյունաբերական վթարների կանխման վերաբերյալ ԱՄԳ-ի գործնական կանոնների ժողովածուն, հաշվի առնելով ա/ խոշոր վթարների կանխման, բ/ խոշոր վթարների ռիսկը առավելագույնս նվազեցնելու եւ գ/ խոշոր վթարների հետեւանքները առավելագույնս նվազեցնելու համար անհրաժեշտ բոլոր միջոցառումների իրականացման ապահովման հրատապությունը, նկատի առնելով այդպիսի վթարների պատճառներն, այդ թվում՝ կազմակերպչական սխալները, մարդկային գործոնը, բլոկների եւ հանգույցների շարքից դուրս գալը, սովորական աշխատանքային ռեժիմից շեղվելը, արտաքին գործոնները եւ բնության ուժերը, հաշվի առնելով Զիմիական անվտանգության միջազգային ծրագրի շրջանակներում Աշխատանքի միջազգային կազմակերպության, Միավորված ազգերի կազմակերպության շրջակա միջավայրի ծրագրի, Առողջապահության համաշխարհային կազմակերպության եւ այլ համապատասխան միջկառավարական կազմակերպությունների միջեւ համագործակցության զարգացման անհրաժեշտությունը, որոշելով մի շարք առաջարկներ ներկայացնել խոշոր արդյունաբերական վթարների կանխման վերաբերյալ, ինչը հանդիսանում է նստաշրջանի օրակարգի չորրորդ կետը, որոշելով միջազգային կոնվենցիայի ձեւ հաղորդել այդ առաջարկներին, ընդունում է, 1993 թվականի հունիսի քսաներկուսին, սույն Կոնվենցիան, որը կարող է անվանվել խոշոր արդյունաբերական վթարների կանխման մասին 1993 թվականի կոնվենցիա:

Մաս 1
Կիրառման շրջանակները եւ սահմանումները

ՀՈՂՎԱԾ 1

1. Սույն Կոնվենցիայի նպատակը վտանգավոր նյութերի ներգրավմամբ խոշոր վթարների կանխումն է եւ այդպիսի վթարների հետեւանքների սահմանափակումը:
2. Սույն Կոնվենցիայի կիրառման շրջանակներն ընդգրկում են բարձր վտանգ պարունակող օբյեկտները:
3. Սույն Կոնվենցիայի շրջանակները չեն ընդգրկում.
ա/ միջուկային սարքերը եւ ռադիոակտիվ նյութերի վերամշակման ձեռնարկությունները, բացառությամբ նշված սարքերի եւ ձեռնարկությունների այն մասերը, որտեղ օգտագործվում են ոչ ռադիոակտիվ նյութեր,
բ/ ռազմական օբյեկտները,
գ/ ձեռնարկությունից դուրս գտնվող տրանսպորտային միջոցները, բացառությամբ խողովակաշարերի:
4. Սույն Կոնվենցիան վավերացնող Անդամը կարող է, շահագրգիռ գործառույթներին եւ գործառույթներին ներկայացնող կազմակերպությունների եւ շահագրգիռ այլ կողմերի

հետ խորհրդակցություններ անցկացնելուց հետո, Կոնվենցիայի կիրառման շրջանակներից հեռացնել տնտեսական գործունեության այնպիսի օբյեկտներ կամ ճյուղեր, որտեղ ապահովված են անվտանգության համազոր միջոցներ:

ՀՈՂՎԱԾ 2

Այն դեպքերում, երբ ծագում են էական բնույթ կրող հատուկ խնդիրներ, ինչի հետեւանքով սույն Կոնվենցիայով նախատեսված բոլոր կանխարգելիչ եւ պաշտպանական միջոցների անհապաղ կիրառումն անհնարին է դառնում, Անդամը, շահագրգիռ գործատուներին եւ գործառուներին ներկայացնող կազմակերպությունների եւ շահագրգիռ այլ կողմերի հետ խորհրդակցություններ անցկացնելուց հետո, սահմանված ժամկետներում մշակում է նշված միջոցների աստիճանական կիրառման պլաններ:

ՀՈՂՎԱԾ 3

Սույն Կոնվենցիայի իմաստով.

ա/ "վտանգավոր նյութ" տերմինը նշանակում է նյութ կամ նյութերի խառնուրդ, որն իր քիմիական, ֆիզիկական կամ թունաբանական հատկանիշների շնորհիվ առանձին կամ միացության մեջ վտանգ են ներկայացնում,

բ/ "առավելագույն թույլատրելի քանակություն" տերմինը նշանակում է հատուկ պայմանների նկատառումով ազգային օրենսդրությամբ սահմանված վտանգավոր նյութի կամ նյութերի կարգի այնպիսի քանակություն, որը գերազանցելու դեպքում տվյալ օբյեկտը սկսում է դասվել որպես բարձր վտանգ պարունակող օբյեկտ,

գ/ "բարձր վտանգ պարունակող օբյեկտ" տերմինը նշանակում է այնպիսի օբյեկտ, որտեղ արտադրվում, վերամշակվում, բեռնվում կամ բեռնաթափվում, օգտագործվում, ժամանակավորապես կամ մշտապես տեղավորվում կամ պահեստավորվում է մեկ կամ մի շարք վտանգավոր նյութեր կամ նյութերի կարգեր, որոնց քանակությունը գերազանցում է առավելագույն, թույլատրելի քանակությունը,

դ/ "խոշոր վթար" տերմինը նշանակում է բարձր վտանգ պարունակող օբյեկտում տեղի ունեցած անակնկալ պատահար՝ խոշոր արտանետում, հրդեհ կամ պայթյուն, որտեղ ներգրավված են մեկ կամ մի շարք վտանգավոր նյութեր եւ որն առաջացնում է լուրջ անմիջական կամ հետաձգված վտանգ բանվորների, բնակչության կամ շրջակա միջավայրի համար,

ե/ "անվտանգության վերաբերյալ գեկույց" տերմինը նշանակում է գրավոր փաստաթուղթ, որտեղ ներկայացվում են տեխնիկական, վարչական եւ օպերատիվ տեղեկություններ՝ բարձր վտանգ պարունակող օբյեկտում բարձր ռիսկի կամ վտանգների գործոնների եւ դրանց նկատմամբ իրականացվող հսկողության միջոցների նշումով, եւ որտեղ տրվում է օբյեկտում անվտանգության ապահովման նպատակով ձեռնարկված միջոցների հիմնավորումը:

զ/ "վթարային իրավիճակ" տերմինը նշանակում է ցանկացած անակնկալ դեպք՝ մեկ կամ մի շարք վտանգավոր նյութերի ներգրավմամբ, որը կարող էր բերել խոշոր վթարի, սակայն տեղի չունեցավ կանխարգելիչ գործոնների, միջոցների կամ համակարգերի շնորհիվ:

Մաս 2

Ընդհանուր սկզբունքներ

ՀՈՂՎԱԾ 4

1. Հիմնվելով իր ազգային օրենսդրության, պայմանների եւ կիրառվող պրակտիկայի վրա եւ շահագրգիռ գործատուներին եւ գործառուներին ներկայացնող կազմակերպությունների եւ շահագրգիռ այլ կողմերի հետ խորհրդակցություններ անցկացնելուց հետո, յուրաքանչյուր Անդամ մշակում, իրականացնում եւ պարբերականորեն վերանայում է խոշոր վթարների վտանգից աշխատավորների,

բնակչության եւ շրջակա միջավայրի պաշտպանության իր հետեւողական ազգային քաղաքականությունը:

2. Այդ քաղաքականությունն իրականացվում է բարձր վտանգ պարունակող օբյեկտներում կանխարգելիչ եւ պաշտպանական միջոցների կիրառման միջոցով եւ, որքան հնարավոր է, նպաստում է առավել անվտանգ տեխնոլոգիաների օգտագործմանը:

ՀՈԴՎԱԾ 5

1. Իրավասու մարմինը, կամ իրավասու մարմնի կողմից լիազորված կամ ճանաչվող մարմինը, շահագրգիռ գործատուներին եւ գործառուներին ներկայացնող կազմակերպությունների եւ շահագրգիռ այլ կողմերի հետ խորհրդակցություններ անցկացնելուց հետո, մշակում է բարձր վտանգ պարունակող օբյեկտների հատկանշման համակարգը՝ նկատի առնելով 3-րդ հոդվածի "գ" կետով տրված դրանց սահմանումը, հիմք ընդունելով վտանգավոր նյութերի ցանկը կամ վտանգավոր նյութերի կարգերի ցանկը, կամ երկու ցանկերն էլ միաժամանակ, նշելով դրանց առավելագույն թույլատրելի քանակությունները՝ իր ազգային օրենսդրության եւ միջազգային նորմերին համապատասխան:

2. 1-ին կետում նշված համակարգը պարբերականորեն վերանայվում եւ թարմացվում է:

ՀՈԴՎԱԾ 6

Իրավասու մարմինը, շահագրգիռ գործատուներին եւ գործառուներին ներկայացնող կազմակերպությունների հետ խորհրդակցություններ անցկացնելուց հետո, ընդունում է հատուկ դրույթ, 8-րդ, 12-րդ, 13-րդ կամ 14-րդ հոդվածներին համապատասխան, իրեն տրամադրված կամ հաղորդված տեղեկության գաղտնիության պահպանման վերաբերյալ, որի հրապարակումը կարող է վնաս պատճառել գործատուի գործարար շահերին՝ պայմանով, որ ընդունված դրույթը չի առաջացնի լուրջ ռիսկեր աշխատավորների, բնակչության կամ շրջակա միջավայրի համար:

Մաս 3

Գործատուների պարտականությունները. հատկանշում

ՀՈԴՎԱԾ 7

Գործատուները, 5-րդ հոդվածում նշված համակարգի հիման վրա, հատկանշում են իրենց կողմից տնօրինվող բարձր վտանգ պարունակող բոլոր օբյեկտները:

Ծանուցում

ՀՈԴՎԱԾ 8

1. Գործատուները իրավասու մարմնին ծանուցում են իրենց կողմից հատկանշված բարձր վտանգ պարունակող յուրաքանչյուր օբյեկտի մասին.

ա/ սահմանված ժամկետներում՝ գործող օբյեկտի դեպքում,

բ/ շահագործման հանձնելուց առաջ՝ նոր օբյեկտի դեպքում:

2. Գործատուները իրավասու մարմնին ծանուցում են նաեւ բարձր վտանգ պարունակող յուրաքանչյուր օբյեկտի վերջնական փակման մասին:

Օբյեկտի մակարդակի վրա իրականացվող միջոցառումներ

ՀՈԴՎԱԾ 9

Բարձր վտանգ պարունակող յուրաքանչյուր օբյեկտի համար գործատուները

ստեղծում եւ պահպանում են բարձր ռիսկի գործոնների վերահսկման փաստաթղթավորված համակարգ, որը նախատեսում է.

ա/ վտանգների հատկանշում եւ վերլուծություն, ինչպես նաեւ ռիսկի գործոնների գնահատում՝ ներառյալ նյութերի միջեւ հնարավոր փոխգործակցության հավանականությունը,

բ/ տեխնիկական միջոցառումներ՝ ներառյալ օբյեկտի նախագծումը, անվտանգության համակարգերը, շինարարությունը, քիմիական նյութերի ընտրությունը, շահագործումը, տեխնիկական սպասարկումը եւ պարբերական գնումը,

գ/ կազմակերպչական միջոցառումներ՝ ներառյալ անձնակազմի մասնագիտական պատրաստությունը եւ հրահանգավորումը, անձնակազմի անվտանգությունն ապահովող սարքավորումների առկայության ապահովումը, անձնակազմով ապահովված լինելու մակարդակները, աշխատանքային ժամերը, պարտականությունների բաշխումը, օբյեկտում արտաքին կապալառուների եւ ժամանակավոր աշխատողների կողմից իրականացվող աշխատանքների նկատմամբ հսկողության սահմանումը,

դ/ վթարային իրավիճակների դեպքում՝ գործողությունների պլաններ եւ համապատասխան ընթացակարգեր, որոնք ընդգրկում են.

i) վթարային իրավիճակների դեպքում՝ գործողությունների արդյունավետ պլանների եւ համապատասխան ընթացակարգերի մշակում, ներառյալ խոշոր վթարների կամ դրանց առաջացման վտանգի դեպքում շտապ բժշկական օգնության տրամադրման ընթացակարգերի մշակումը, դրանց պարբերական ստուգումը եւ արդյունավետության գնահատումը եւ, անհրաժեշտության դեպքում, վերանայումը,

ii) պոտենցիալ վթարների եւ օբյեկտում վթարային իրավիճակի դեպքում գործողությունների պլանների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում իրավասու մարմիններին, որոնք պատասխանատու են վթարային իրավիճակների դեպքում գործողությունների պլանների մշակման եւ օբյեկտի տարածքից դուրս գտնվող բնակչության եւ շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված միջոցառումների նախապատրաստման համար,

iii) ցանկացած անհրաժեշտ խորհրդակցությունների անցկացում այդպիսի մարմինների հետ,

ե/ խոշոր վթարների հետեւանքները սահմանափակող միջոցներ,

զ/ խորհրդակցությունների անցկացում աշխատավորների եւ նրանց ներկայացուցիչների հետ,

է/ համակարգի կատարելագործում՝ ներառյալ տեղեկատվության հավաքման եւ վթարների ու վթարային իրավիճակների վերլուծության միջոցները:

Այդ վերլուծությունների արդյունքները քննարկվում են աշխատավորների եւ նրանց ներկայացուցիչների հետ եւ գրանցվում են՝ ազգային օրենսդրության եւ պրակտիկային համապատասխան:

Անվտանգության վերաբերյալ զեկույց

ՀՈՂՎԱԾ 10

1. Յուրաքանչյուր գործատու պատրաստում է անվտանգության վերաբերյալ զեկույց՝ 9-րդ հոդվածով սահմանված պահանջներին համապատասխան:

2. Չեկույցը պատրաստվում է.

ա/ բարձր վտանգ պարունակող գործող օբյեկտի դեպքում՝ ծանուցումից հետո, ազգային օրենսդրությամբ սահմանված ժամկետներում,

բ/ բարձր վտանգ պարունակող սոր օբյեկտի դեպքում՝ մինչեւ այն շահագործման հանձնելը:

ՀՈՂՎԱԾ 11

Գործատուները վերանայում, նորացնում եւ փոփոխում են անվտանգության վերաբերյալ զեկույցները.

ա/ օբյեկտի կամ արտադրական գործընթացի անվտանգության մակարդակի վրա զգալիորեն ազդող փոփոխությունների, կամ օբյեկտում առկա վտանգավոր նյութերի քանակությունների փոփոխության դեպքում,
բ/ եթե այդպես է պահանջում տեխնիկական գիտելիքների զարգացումը կամ վտանգի գնահատման նոր մեթոդների ի հայտ գալը,
գ/ ազգային օրենսդրությամբ սահմանված պարբերականությամբ,
դ/ իրավասու մարմնի պահանջով:

ՅՈՒՐԱԿԱՆ 12

Գործատուները 10-րդ եւ 11-րդ հոդվածներում նշված անվտանգության վերաբերյալ զեկույցներն ուղղում կամ ներկայացնում են իրավասու մարմնին:

Վթարի վերաբերյալ զեկույց

ՅՈՒՐԱԿԱՆ 13

Գործատուները տեղի ունեցած խոշոր վթարի մասին անհապաղ տեղեկացնում են իրավասու մարմնին եւ համապատասխան լիազորություններով օժտված այլ մարմիններին:

ՅՈՒՐԱԿԱՆ 14

1. Գործատուները տեղի ունեցած խոշոր վթարից հետո սահմանված ժամկետներում իրավասու մարմնին են ներկայացնում մանրամասն զեկույց, որը պարունակում է վթարի պատճառների վերլուծությունը եւ օբյեկտում դրա հետեւանքների, ինչպես նաեւ դրանց նվազեցման նպատակով ձեռնարկված միջոցների նկարագրությունը:

2. Չեկույցը պարունակում է մանրամասն հանձնարարականներ նոր վթարի բացառմանն ուղղված գործնական միջոցների վերաբերյալ:

Մաս 4

Իրավասու մարմինների պարտականությունները. պատրաստվածությունը օբյեկտի տարածքից դուրս՝ վթարային իրավիճակի դեպքում

ՅՈՒՐԱԿԱՆ 15

Իրավասու մարմինը, հաշվի առնելով գործատուից ստացված տեղեկությունները, ապահովում է վթարային իրավիճակներում գործողությունների պլանների եւ բարձր վտանգ պարունակող յուրաքանչյուր օբյեկտի տարածքից դուրս գտնվող բնակչության եւ շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված միջոցառումների մշակումը, սահմանված պարբերականությամբ նորացումը եւ համաձայնեցումը համապատասխան մարմինների հետ:

ՅՈՒՐԱԿԱՆ 16

Իրավասու մարմինն ապահովում է.

ա/ խոշոր վթարի դեպքում կիրառվելիք անվտանգության միջոցների եւ ճիշտ վարքի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը բնակչությանը, որը կարող է հայտնվել այդպիսի խոշոր վթարի ազդեցության ներքո՝ անգամ, եթե այն չի դիմում նման տեղեկատվություն ստանալու խնդրանքով, տեղեկատվության թարմացումը եւ սահմանված պարբերականությամբ այդ նորացված տեղեկատվության տարածումը,

բ/ խոշոր վթարի առաջացման դեպքում՝ բնակչության տեղեկացում հնարավորինս սեղմ ժամկետներում,

գ/ եթե խոշոր վթարի հետեւանքները կարող են ձեռք բերել անդրսահմանային բնույթ, ապա սույն հոդվածի "ա" եւ "բ" կետերով նախատեսված տեղեկատվությունը տրամադրվում է շահագրգիռ պետություններին՝ համագործակցության եւ համադրման

ապահովման նպատակով:

Բարձր վտանգ պարունակող օբյեկտների տեղաբաշխումը

ՀՈԴՎԱԾ 17

Իրավասու մարմինը մշակում է օբյեկտների տեղաբաշխման համակողմանի քաղաքականություն՝ հաշվի առնելով բարձր վտանգ պարունակող օբյեկտների պատշաճ հեռավորության ապահովումը արդյունաբերական եւ բնակելի շրջաններից եւ հանրային օգտագործման վայրերից, ինչպես նաեւ համապատասխան միջոցներ է նախատեսում գործող օբյեկտների համար: Այդ քաղաքականությունը հիմնվում է սույն Կոնվենցիայի 2-րդ մասով սահմանված ընդհանուր սկզբունքների վրա:

ՀՈԴՎԱԾ 18

1. Իրավասու մարմինը պետք է ապահովված լինի մասնագիտացված եւ պատրաստված՝ համապատասխան հմտություններով օժտված կադրերով, ինչպես նաեւ տեսչությունների, հետաքննությունների, գնահատումների, սույն Կոնվենցիայում դիտարկվող հարցերի շուրջ խորհրդակցություններ անցկացնելու եւ ազգային օրենսդրության դրույթների պահպանման համար անհրաժեշտ տեխնիկական եւ մասնագիտական միջոցներով:

2. Գործատուի եւ բանվորների ներկայացուցիչները բարձր վտանգ պարունակող օբյեկտներում կարող են ուղեկցել սույն Կոնվենցիայով նախատեսված միջոցների կիրառումը հսկող տեսուչներին, եթե միայն տեսուչները չեն գտնում, որ իրավասու մարմինների ընդհանուր հրահանգների համաձայն դա կարող է խանգարել իրենց պարտականությունների կատարմանը:

ՀՈԴՎԱԾ 19

Իրավասու մարմինն իրավունք ունի դադարեցնել ցանկացած գործունեություն, որը կարող է խոչոր վթարի ակնհայտ վտանգ առաջացնել:

Մաս 5

Բանվորների եւ նրանց ներկայացուցիչների իրավունքներն ու պարտականությունները

ՀՈԴՎԱԾ 20

Բարձր վտանգ պարունակող օբյեկտում աշխատանքի անվտանգության ապահովման նպատակով բանվորների եւ նրանց ներկայացուցիչների հետ անց են կացվում խորհրդակցություններ՝ համագործակցության համապատասխան մեխանիզմների օգտագործմամբ: Բանվորները եւ նրանց ներկայացուցիչները, մասնավորապես.

ա/ ստանում են պատշաճ եւ ստույգ տեղեկատվություն բարձր վտանգ պարունակող օբյեկտի հետ կապված ռիսկի գործոնների եւ դրանց հնարավոր հետեւանքների վերաբերյալ,

բ/ ստանում են տեղեկատվություն իրավասու մարմինների բոլոր հանձնարարականների, հրահանգների եւ առաջարկների վերաբերյալ,

գ/ ընդգրկվում են հետեւյալ փաստաթղթերի մշակման նպատակով կազմակերպվող խորհրդակցություններում եւ ունեն այդ փաստաթղթերի հետ ծանոթանալու իրավունք.

i) անվտանգության վերաբերյալ գեկույցներ,

ii) վթարային իրավիճակների դեպքերում գործողությունների պլաններ եւ համապատասխան ընթացակարգեր,

iii) վթարների վերաբերյալ գեկույցներ,

դ/ անցնում են պարբերական հրահանգավորում եւ մասնագիտական ուսուցում խոչոր վթարների կանխման եւ դրանց առաջացման գործոնների վերահսկման հետ կապված

գործողությունների և ընթացակարգերի վերաբերյալ, ինչպես նաև խոշոր վթարի առաջացման դեպքում վթարային ընթացակարգերի վերաբերյալ,

ե/ ծառայողական պարտականությունների շրջանակներում, չենթարկվելով որևէ պատժի, ձեռնարկում են ուղղիչ միջոցներ, իսկ, անհրաժեշտության դեպքում, դադարեցնում են աշխատանքը, եթե ստացված մասնագիտական պատրաստվածության և անձնական փորձի հիման վրա բավարար հիմքեր ունեն ենթադրելու, որ առկա է խոշոր վթարի վտանգ և տեղեկացնում են ղեկավարությանը կամ տագնապ են հայտարարում, կախված հանգամանքներից, այդ միջոցները ձեռնարկելուց առաջ կամ անմիջապես հետո,

զ/ գործատուի հետ քննարկում են բոլոր պոտենցիալ վտանգները, որոնք, իրենց կարծիքով, կարող են խոշոր վտանգի պատճառ հանդիսանալ և իրավունք ունեն իրավասու մարմինն տեղեկացնել այդպիսի վտանգների մասին:

ՀՈԴՎԱԾ 21

Բարձր վտանգ պարունակող օբյեկտում զբաղված բանվորները պարտավոր են.

ա/ հետևել բարձր վտանգ պարունակող օբյեկտներում խոշոր վթարների կանխման և դրանց առաջացնող գործոնների վերահսկմանն առնչվող շահագործման կանոններին և ընթացակարգերին,

բ/ խոշոր վթարի դեպքում հետևել բոլոր վթարային ընթացակարգերին:

Մաս 6

Արտահանող պետությունների պարտականությունները

ՀՈԴՎԱԾ 22

Եթե արտահանող անդամ պետությունում վտանգավոր նյութերի, տեխնոլոգիաների կամ գործընթացների կիրառումն արգելված է այն կապակցությամբ, որ դրանք խոշոր վտանգի առաջացման պատճառ կարող են հանդիսանալ, այդպիսի արգելքի և դրան պատճառների մասին տեղեկատվությունը պետք է այդ պետության կողմից տրամադրվի յուրաքանչյուր ներմուծող պետությանը:

Մաս 7

Եզրափակիչ դրույթներ

ՀՈԴՎԱԾ 23

Սույն Կոնվենցիայի վավերագրերը գրանցման համար ուղարկվում են Աշխատանքի միջազգային գրասենյակի Գլխավոր տնօրենին:

ՀՈԴՎԱԾ 24

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում միայն Աշխատանքի միջազգային կազմակերպության այն Անդամների համար, որոնց վավերագրերը գրանցվել են Գլխավոր տնօրենի կողմից:

2. Այն ուժի մեջ է մտնում Գլխավոր տնօրենի կողմից Կազմակերպության երկու Անդամի վավերագրերի գրանցման պահից 12 ամիս անց:

3. Հետագայում սույն Կոնվենցիան Կազմակերպության յուրաքանչյուր Անդամի համար ուժի մեջ է մտնում այդ պետության վավերագրի գրանցման պահից 12 ամիս հետո:

ՀՈԴՎԱԾ 25

1. Սույն Կոնվենցիան վավերացրած Կազմակերպության յուրաքանչյուր Անդամ, Կոնվենցիայի առաջին անգամ ուժի մեջ մտնելու օրվանից տասը տարին լրանալուն պես,

կարող է չեղյալ հայտարարել այն՝ այդ մասին ծանուցում ուղարկելով Աշխատանքի միջազգային գրասենյակի Գլխավոր տնօրենին՝ գրանցման համար:

2. Կոնվենցիան վավերացրած Կազմակերպության այն Անդամի համար, որը նախորդ կետում նշված տասնամյա ժամկետին հաջորդող մեկ տարվա ընթացքում չի օգտվում սույն հոդվածով նախատեսված չեղյալ հայտարարման իրավունքից, Կոնվենցիան ուժի մեջ է մտնում հաջորդ տասը տարվա ընթացքում, եւ հետագայում նա կարող է այն չեղյալ հայտարարել յուրաքանչյուր տասնամյա ժամկետի ավարտից հետո՝ սույն հոդվածով սահմանված կարգով:

ՀՈԴՎԱԾ 26

1. Աշխատանքի միջազգային գրասենյակի Գլխավոր տնօրենը ծանուցում է Աշխատանքի միջազգային կազմակերպության բոլոր Անդամներին Կազմակերպության Անդամների կողմից իրեն ուղղված վավերագրերի եւ չեղյալ հայտարարման ծանուցագրերի մասին:

2. Կազմակերպության Անդամներից երկրորդ վավերագրի ստացման մասին ծանուցելիս, Գլխավոր տնօրենը առաջիններիս ուշադրությունը հրավիրում է սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու օրվան:

ՀՈԴՎԱԾ 27

Աշխատանքի միջազգային գրասենյակի Գլխավոր տնօրենը, Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության 102-րդ հոդվածին համապատասխան, Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին է ուղղում իր կողմից նախորդ հոդվածների դրույթներին համապատասխան գրանցված բոլոր վավերագրերի եւ չեղյալ հայտարարման ծանուցագրերի մասին մանրամասն տեղեկություններ:

ՀՈԴՎԱԾ 28

Անհրաժեշտության դեպքում, Աշխատանքի միջազգային գրասենյակի ղեկավար մարմինը Գլխավոր խորհրդաժողովին է ներկայացնում սույն Կոնվենցիայի կիրառման վերաբերյալ զեկույց եւ քննարկում է խորհրդաժողովի օրակարգում դրա ամբողջական կամ մասնակի վերանայման հարցն ընդգրկելու նպատակահարմարությունը:

ՀՈԴՎԱԾ 29

1. Եթե խորհրդաժողովն ընդունում է սույն Կոնվենցիան ամբողջովին կամ մասնակիորեն վերանայող նոր Կոնվենցիա եւ եթե նոր Կոնվենցիան այլ բան չի նախատեսում, ապա.

ա/ Կազմակերպության որեւէ Անդամի կողմից նոր, վերանայված Կոնվենցիայի վավերացումն ինքնաբերաբար, անկախ 25-րդ հոդվածի դրույթներից, առաջացնում է սույն Կոնվենցիայի չեղյալ հայտարարում՝ պայմանով, որ նոր, վերանայված Կոնվենցիան արդեն ուժի մեջ է,

բ/ նոր, վերանայված Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո սույն Կոնվենցիան փակ է Կազմակերպության անդամների կողմից վավերացման համար:

2. Սույն Կոնվենցիան, համեմայնդեպս, ուժի մեջ է մտնում՝ իր ներկա ձեւով եւ բովանդակությամբ, Կազմակերպության այն անդամների համար, որոնք այն վավերացրել են, սակայն չեն վավերացրել վերանայված Կոնվենցիան:

ՀՈԴՎԱԾ 30

Սույն Կոնվենցիայի անգլերեն եւ ֆրանսերեն տեքստերը հավասարազոր են:

Կատարված է ժնեւ քաղաքում 1993 թվականի հունիսի 22-ին:

* Կոնվենցիան Չայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1997 թվականի հունվարի 3-ից: